Դատապարտյալները ճաղավանդակներում էին՝ ձեռնաշղթաներով

09.10.2012 08:07

Աղբյուրը՝ http://www.aravot.am

Էրեբունի եւ Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի արտագնա նիստի ժամանակ հերթական սկանդալն է տեղի ունեցել:

Դատավոր Վլադիմիր Գրիգորյանի վարույթում են գտնվում ցմահ ազատազրկման դատապարտված**Արարատ Մուրադխանյանի**, **Արտակ Ճաղարյանի եւ Հովհաննես Սահակյանի** գործերը:

Արդարադատության նախարարության «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում անցյալ ուրբաթ արտագնա նիստն էր:

Aravot.am-ի հետ զրույցի ժամանակ Արարատ Մուրադխանյանի պաշտպան Լիպարիտ Սիմոնյանը ներկայացրեց, թե ինչ է տեղի ունեցել նիստի ժամանակ. «Նիստերի դահլիճի ճաղավադակներում ամբաստանյալնեը գտնվում էին ձեռնաշղթաներով:Սեղան չկար ճաղավանդակում եւ անհավասար մրցակցային իրավիճակ էր: Ես այդ կապակցությամբ բացարկ հայտնեցի դատավորին, ինչին միացան նաեւ մյուս գործընկերներս՝ ամբաստանյալների պաշտպաններ, փաստաբաններ Կարեն Իսրայելյանն ու Կարեն Մանուչարյանը»:

Ըստ Լիպարիտ Սիմոնյանի, դատարանը նրանց նկատմամբ նվաստացուցիչ վերաբերմունք էր դրսեւորել:

Ի դեպ, պաշտպպան Լ.Սիմոնյանը նիստի ժամանակ վկայակոչել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից Աշոտ Հարությունյանի նկատմամբ կայացրած ԵԴ վճիռը, որով փաստվել էր , որ խախտվել է Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածը. ամբաստանյալը պահվել է ճաղավանդակում:

Իհարկե, նիստը բացարկով չի ավարտվել, այլ մեղադրող Մուրադյանի ռեպլիկով. «Դատավարությունը ադաթով պետք է անել, այլ ոչ թե՝ օրենքով»:

Ռուզան ՄԻՆԱՍՅԱՆ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })